ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Գ.

Սահմանադրական դատարանը հանդես է գալիս Սահմանադրության, դրանով ամրագրված սկզբունքների, նորմերի և դրույթների պահապան ու պաշտպան: Կենսականորեն կարևոր այդ գործառույթով սահմանադրական դատարանն ապահովում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացումն ու պաշտպանությունը, քանզի մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ բոլոր հիմնարար սկզբունքներն ու նորմերն ամրագրված են պետության Հիմնական օրենքի դրույթներով: Սահմանադրական դատարանը մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն իրականացնում է իր լիազորությունների իրացման միջոցով[1]:

Ընդորում, մարդու սահմանադրական կարևորագույն իրավունքների երաշխավորման ու պաշտպանության համակարգում մեծապես կարևորվում են սահմանադրական և «սովորական» դատարանների փոխհարաբերակցության հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրումն ու կանոնակարգումը: Այս առումով նկատենք, որ Մ. Կլեանդրովը հիմնավորված պնդում է, որ սահմանադրական դատարանը յուրաքանչյուր պետության դատական համակարգի կենտրոնական թևն է և միաժամանակ ուղեցույցը, իսկ կազմակերպական-կադրային իմաստով՝ դատական իշխանության մյուս թևերի համար[2]:

Սահմանադրական արդարադատության բովանդակության ու առանձնահատկությունների միակերպ ընկալումը պահանջում է սահմանադրական-արդարադատական և ընդհանուր-արդարադատական մարմինների (ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների) միջև գործառույթների ճշգրիտ և այդ մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակին համապատասխանող համարժեք բաշխում, որը կարևոր է նախ՝ արդարադատության արդյունավետ իրականացման, հետևաբար նաև սահմանադրական օրինականությունն ապահովելու տեսանկյունից:

Առաջին հերթին նշենք, որ միջազգային սահմանադրական-արդարադատական պրակտիկան վկայում է, որ սահմանադրական և այլ

---

1 **Ализода З.** *Конституционный суд и проблемы защиты прав человека и гражданина в Республике Таджикистан (Конституцион-ное правосудие. Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, вып. 1(51), 2011, с. 126-127).*

2 *Տե՛ս* **Клеандров М.** *Совершенствование конституционного правосудия в Российской Федерации: новый этап, ЭбхЫЭ п»ХбхЩ, ¿з 99- 100:*

դատարանների փոխհարաբերությունների հարցում հիմնականում գոյություն ունի երեք մոտեցում:

Առաջին՝ նորմատիվ ակտի սահմանադրականության որոշման խնդիրը բացառապես սահմանադրական դատարանի մենաշնորհն է (այդպես է, օրինակ՝ Ավստրիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում և այլ երկրներում): Մյուս դատարաններն այս հարցով պարզապես հանդես են գալիս որպես դիմող սուբյեկտներ:

Երկրորդ՝ բոլոր դատարաններն իրականացնում են դատական սահմանադրական վերահսկողություն, սակայն բողոքարկման կամ գանգատարկման դեպքում «վերջին խոսքը» պատկանում է սահմանադրական դատարանին (դասական օրինակ է Պորտուգալիան) կամ Գերագույն դատարանի սահմանադրական պալատին (օրինակ՝ Հունաստանում):

Երրորդ՝ երբ սահմանադրական վերահսկողության մարմինը կոնկրետ, հատկապես ընթացակարգային, գրեթե որևէ փոխհարաբերություն չունի դատական համակարգի մյուս ինստիտուտների հետ[3]: Դրանից զատ, անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական և այլ դատարանների միջև փոխհարաբերությունները (կապերը) կարելի է դասել երեք խմբի՝ օրգանական, ընթացակարգային և գործառնական[4]:

Սույն ոլորտում հրատապ և արդիական հիմնախնդիրներից մեկը վերաբերում է ընդհանուր (սովորական, հասարակ) դատարանների կողմից նախնական սահմանադրական հարցում ներկայացնելու հնարավորությանը (իրավունքին կամ պարտականությանը): Ընդորում, հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ընդհանուր իրավասության դատարանների՝ նախնական հարցումներով սահմանադրական դատարան դիմելու ընթացակարգին, դրա իրացման հնարավորություններին,

---

[3] Այսպիսի մոտեցման օրինակ կարելի է համարել 1995 թվականի հուլիսի 5-ի դրությամբ ստեղծված և գործող ՀՀ սահմանադրական դատարանը: Չնայած դատարանները սահմանադրական դատարան դիմելու փաստացի հնարավորություն ունեին՝ միջնորդավորված, անուղղակի ձևով, այն է՝ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի և ՀՀ Նախագահի միջոցով, սակայն վերջիններս օժտված էին դատարանների խնդրանքների կամ միջնորդությունների բավարարման իրավունքով, բայց ոչ երբեք պարտականությամբ (ընդ որում, այդ ընթացակարգն այնքան էր բարդացված, որ գործնականում այդպիսի դիմումները ոչ միայն չէին հասնում սահմանադրական դատարան, այլ որոշ դեպքերում՝ նաև Հանրապետության Նախագահին): Սակայն 2005թ. սահմանադրական համապատասխան փոփոխությունները վերջ դրեցին այդ իրավիճակին և նախատեսեցին բոլոր դա-տարանների իրավունքը՝ անմիջականորեն դիմելու սահմանադրական դատարան՝ վերջիններին ձերբազատելով միջնորդավորված կառուցակարգերից և, ըստ այդմ, ապահովելով արդարադատության մատչելիությունը:

[4] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Հարությունյան Գ.Գ.,** *Դատական իշխանություն. համակարգային գործակցության եվրոպական զարգացումների փորձից, Ե., 2002, էջ 21:*

սահմանադրական դատարանի և այլ դատարանների ակտիվ փոխգործակցության ապահովման հիմնահարցերին, որոնց կարգավորմամբ է մեծապես պայմանավորված սահմանադրական դատարանում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության իրականացումը:

Այսպիսով, տեսության մեջ և գործնականում հաճախ է արվում հետևյալ հարցադրումը. եթե ընդհանուր իրավասության դատարանները որոշակի գործ քննելիս գտնում են, որ կիրառվող իրավական ակտը հակասում է ՀՀ Սահմանադրությանը, ապա արդյոք նրանք պարտավո՞ր են այդ ակտի սահմանադրականության որոշման հարցով դիմել սահմանադրական դատարան, թե՞ ոչ: Նախնական սահմանադրական հարցում ներկայացնելու կապակցությամբ աշխարհում ձևավորված և կիրառվող մոդելների ուսումնասիրու-թյան շնորհիվ պարզ է դառնում, որ այս տեսանկյունից պետությունները կարելի է բաժանել երկու խմբի.

1. երկրներ, որտեղ սովորական դատարանները չունեն հայեցողության հնարավորություն: Այսինքն՝ երբ բացահայտվում են փաստեր, որոնք կոնկրետ գործով պարտադիր կիրառման ենթակա իրավադրույթի սահմանադրականության վերաբերյալ կասկածների առիթ կարող են դառնալ, դատարանները պարտավոր են դիմել սահմանադրական արդարադատություն իրականացնող ինստիտուտին համապատասխան նախնական հարցմամբ: Այդպես է, մասնավորապես, Ալբանիայում, Ավստրիայում, Բելգիայում, Լատվիայում, Լիտվայում, Մոլդովայում, Ռումինիայում:

2. Բուլղարիայում, Գերմանիայում, Թուրքիայում, Իտալիայում, Կիպ-րոսում, Չեխիայում, Ռուսաստանում, Սլովակիայում և մի շարք այլ երկրներում սովորական դատավորը պետության սահմանադրական դատարան նախնական հարցում ներկայացնում է միայն այն դեպքում, երբ անվերապահորեն վստահ է նորմատիվ ակտի կամ դրա առանձին հոդվածի հակասահմանադրականության և օրենքի սահմանադրական կիրառումը թույլատրող մեկնաբանության բացակայության վրա: Այս կապակցությամբ Ժողովրդավարության իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողովը) ընդգծում է, որ եթե տվյալ երկրում նախատեսված չէ սահմանադրական արդարադատության անմիջական անհատական մատչելիության հնարավորություն, ապա նախնական հարցումներ կատարելը պետք է պայմանավորված լինի որոշակի իրավա-դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դատավորների հա-մոզման առկայությամբ: Այդ պարագայում պարզապես որոշակի կասկածների գոյությունն արդեն իսկ բավարար է համապատասխան խնդրանքով սահմանադրական դատարան դիմելու համար[5]:

---

[5] *Տե՛ս Исследование о прямом доступе к конституционному правосудию № 538/2009, принятое на 85 пленарном заседании Венецианской комиссии 17-18 дек. 2010г. /CDL-AD(2010)039rev./, 216-րդ կետ: Ընդունվել է Գագիկ Հարությունյանի (հանձնաժողովի*

Մինչև ուսումնասիրվող հարցի առնչությամբ հայ իրականության մեջ առկա իրավիճակին անդրադառնալը համառոտ ներկայացնենք Ռուսաստանի Դաշնության սահմանադրական պրակտիկայում ՌԴ գերագույն դատարանի և սահմանադրական դատարանի միջև ծագած վեճը և դրա հանգուցալուծումը:

Այսպես, քննարկվող հարցի վերաբերյալ ՌԴ գերագույն դատարանի պլենումն իր դիրքորոշումը հայտնել է դեռևս 1995 թ. հոկտեմբերի 31-ի որոշմամբ[6]: Դրա 2-րդ կետում թվարկվում են այն դեպքերը, երբ դատարանները Սահմանադրությունը կիրառում են անմիջականորեն. 1. երբ Սահմանադրությամբ ամրագրված նորմը լրացուցիչ կարգավորման կարիք չունի, և օրենքի ընդունման պահանջը բացակայում է. 2. երբ դատարանը կգտնի, որ Սահմանադրությունից առաջ կամ դրանից հետո ընդունված օրենքը հակասում է Սահմանադրությանը: Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ կիրառվող կամ կիրառված օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի անորոշության դեպքում դատարանը դիմում է սահմանադրական դատարան՝ այդ օրենքի սահմանադրականության պարզաբանման վերաբերյալ հարցմամբ: Այդպիսի հարցումը կարող է անել յուրաքանչյուր ատյանի դատարան և գործի քննության յուրաքանչյուր փուլում:

Այս կապակցությամբ հաճախ արդարացիորեն նշվում է, որ պլենումի որոշման 3-րդ կետում օգտագործվող «անորոշություն» տերմինը մնում է չպարզաբանված: Եթե «անորոշություն» ասելով նկատի է առնվում օրենքի սահմանադրականության վերաբերյալ դատարանի կասկածը, ապա ինչպես պետք է հասկանալ այն, որ դատարանը սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման մեջ պետք է հիմնավորի Սահմանադրությանը հակասելու փաստը. չէ՞ որ եթե դատարանը դիմումում պատճառաբանում է իր դիրքորոշումը, ապա նա արդեն գտել է ելքը բարդ իրավական վեճից, և ոչինչ չի խանգարում նրան գործն ըստ էության լուծել սահմանադրական նորմի հիման վրա՝ անտեսելով Սահմանադրությանը հակասող նորմը:

Ըստ Ն. Վիտրուկի մոտեցման՝ եթե դատարանը, հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները, կհամոզվի, որ Սահմանադրության նորմը բավարար է օրինական և հիմնավոր որոշում կայացնելու համար, կարող է անմիջականորեն կիրառել Սահմանադրության նորմը, անտեսելով այն օրենքը, որը, դատարանի համոզմամբ, հակասահմանադրական է: Սակայն նման իրավիճակում դատարանը չի ազատվում այդ օրենքի

անդամ, Հայաստան), Անգելիկա Նուսբերգերի (հանձնաժողովի անդամի տեղակալ, Գերմանիա), Պետեր Պացոլայի (հանձնաժողովի անդամ, Հունգարիա) մեկնաբանությունների հիման վրա: Տե՛ս նաև CDL-INF(2001)28 Interium Opinion on the Draft Law on the Constitutional Coyrt of the Republic of Azerbaijan:

[6] *Постановление Пленума Верховного Суда РФ от 31 октября 1995г. - 8 "О некоторых вопросах применения судами Конституции Российской Федерации при осуществлении правосудия" (с изменениями и дополнениями от 16.04.2013г.).*

սահմանադրականության որոշման հարցով սահմանադրական դատարան դիմելու պարտականությունից, հակառակ դեպքում՝ նա կխախտի օրինականության սկզբունքը[7]:

Ի սկզբանե փաստենք, որ «ստվերային սահմանադրական արդարադատության» լայն կիրառման հնարավորությունը վտանգավոր է: Բանն այն է, որ հնարավոր է մի իրավիճակ, երբ կոնկրետ գործի քննության ընթացքում կիրառվող նորմատիվ իրավական ակտը մի դատավոր կգնահատի որպես սահմանադրական, մեկ այլ դատավոր՝ Սահմանադրությանը հակասող: Անշուշտ, իրավիճակն ավելի է բարդանում, երբ հավելում ենք, որ ընդհանուր իրավասության դատարանների որոշումները չեն հրատարակվում[8]:

Ասվածը հարկ է լրացնել այն փաստով, որ առհասարակ մարդու իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման գործում առանձնակի ու առաջնային դեր ունեն հենց սովորական դատարանները, քանզի վերջիններս օրենքների կիրառման «առաջին գծում» են: Այդ դատարանները առաջնային նախնական այն օղակն են, որն իրականում անմիջականորեն առնչվում է օրենքի նորմի կամ դրա կիրառման սահմանադրականության հիմնախնդիրներին: Նրանց կողմից սահմանադրաիրավական դրույթների ճիշտ և միանշանակ ընկալմամբ ու գիտակցմամբ է պայմանավորված երկրում սահմանադրական կարգի, ինչպես նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանվածության մակարդակը:

Այս տեսանկյունից, անշուշտ, սահմանադրականության հարցեր քննելուն (հետևաբար՝ նաև մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացմանը) աջակցելու սովորական դատարանների լիազորությունները և պատրաստակամությունը, առաջին հերթին, անհրաժեշտ և կարևոր են իրավունքները խախտված անձի համար, քանի որ դրանից է կախված գործի արագ և արդյունավետ քննությունը կա՛մ սովորական դատավարության ընթացակարգով, կա՛մ համապատասխան նախնական հարցում ներկայացնելու միջոցով[9]:

Միաժամանակ, անդրադառնալով մեր երկրում այս առումով ձևավորված իրադրությանը, ցավով նկատենք, որ այն այնքան էլ հուսադրող չէ: Հենց դա է

---

[7] **Витрук Н.В.** *Конституционное правосудие. Судебно-конституционное право и процесс. Учеб. пособие, М., 2005, с. 433-434.*

[8] *Մանրամասն տե՛ս* **Ղամբարյան Ա.,** *ՀՀ սահմանադրական և վճռաբեկ դատարանների իրավասությունների տարանջատման առանձին հիմնախնդիրները: (Սահմանադրական արդարադատության հիմնախնդիրները և զարգացման միտումներն արդի ժամանակաշրջանում, խմբ.՝ Վ. Հովհաննիսյան, Ե., 2007, էջ 35-36):*

[9] *Այս մասին տե՛ս Վենետիկի հանձնաժողովի վերոհիշյալ ուսումնասիրությունը, CDL-AD(2010)039 rev., էջ 70: Ընդունվել է Գագիկ Հարությունյանի (հանձնա-ժողովի անդամ, Հայաստան), Անգելիկա Նուսսբերգերի (հանձնաժողովի անդամի տեղակալ, Գերմանիա), Պետեր Պացոլայի (հանձնաժողովի անդամ, Հունգարիա) մեկնաբանությունների հիման վրա:*

պատճառը, որ ՀՀ սահմանադրական դատարանը իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ յուրաքանչյուր տարի հրապարակվող հաղորդումներում անընդմեջ շեշտում է դատարանների և պետական այլ մարմինների գործունեության ակտիվության մեծացման հրատապ անհրաժեշտությունը: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը դիմող սուբյեկտների համար ոչ միայն հայեցողական լիազորություն է, այլև ենթադրում է որոշակի պարտավորություն՝ երկրում սահմանադրական օրինականություն հաստատելու և Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու հարցում: Պետական իշխանության մարմինները չեն կարող ամենօրյա առնչություն չունենալ Սահմանադրության հետ: Ու եթե այդ առնչությունը խորքային է, ապա կենսական ու առաջնային է դառնում մշտական ուշադրությունը Սահմանադրության գերակայության ապահովմանը: Աներկբա է, որ սահմանադրական բոլոր ինստիտուտներն ունեն նաև սահմանադրական վերահսկողության կամ հսկողության առաքելություն:

Մտահոգիչ իրավիճակ է ձևավորվել (և դեռևս շարունակում է տիրել) ՀՀ դատական համակարգում: Մասնավորապես, անհանգստացնող է այն իրողությունը, որ դատարաններն օրենքների դրույթների սահմանադրականության հարցին բավարար ուշադրություն չեն դարձնում անգամ, երբ քաղաքացիներն են նման խնդիրներ առաջադրում: Իսկ առանձին երկրներում միայն դատարանների դիմումների հիման վրա սահմանադրական դատարանների քննության առած գործերը տարվա ընթացքում քննված գործերի կեսից ավելին են: Սահմանադրական դատարանը գտնում է, որ մեզանում իրավիճակի մտահոգիչ լինելը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքների նորմերի մոտ 99 տոկոսը նախապես կիրառել են դատարանները[10]:

---

[10] Ի թիվս այլոց, տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումը. ըստ այդմ՝ վերջին մի քանի տարում 57 օրենսդրական նորմ ճանաչվել է հակասահմանադրական, որը զարմանալի ցուցանիշ է՝ հաշվի առնելով եվրոպական փորձը: Հատկանշական է, որ այդ գործերի 20 տոկոսից ավելիի պարագայում դատավարության կողմերը միջնորդել են դատարանին կասեցնել գործի վարույթը, դիմել սահմանադրական դատարան՝ այդ դրույթի (դրույթների) սահմանադրականության հարցը պարզելու նպատակով, սակայն բոլոր այդ դեպքերում միջնորդությունները մերժվել են, վարույթը չի կասեցվել, քննվել է, կիրառվել է նորմը, որը հետագայում անձի դիմումի հիման վրա քննված գործի արդյունքներով սահմանադրական դատարանը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր: Նման պայմաններում ակնհայտորեն խախտվում են անձանց իրավունքները: Դատարանները նաև իրենց նախաձեռնությամբ չեն դիմում սահմանադրական դատարան: ՀՀ սահմանադրական դատարանը տարեկան դատարաններից լավագույն դեպքում 1-2 դիմում է ստանում

Այս խնդրին ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև 2013թ. սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշման 9-րդ կետում՝ դարձյալ շեշտելով, որ վերջին տարիներին շուրջ 60 գործերով քաղաքացիների դիմումների հիման վրա ՀՀ դատարանների փաստացի կիրառած օրենքների դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Դրանց սահմանադրականության վերաբերյալ նորմը կիրառելիս դատարաններում որևէ մտահոգություն չի առաջացել՝ անգամ երբ առկա են եղել նաև սահմանադրական դատարան դիմելու միջնորդություններ: Սա ինքնին մտահոգիչ հանգամանք է:

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանի և դատական իշխանության մաս կազմող այլ մարմինների լիազորությունների սահմանազատման հետ կապված հարցադրումների շրջանակում հարկ է անդրադառնալ նաև դրանց միջև առկա սահմանագծի չգիտակցման հետ կապված հետևյալ խնդրին. երբեմն դատական որոշ ատյաններ, ոչ ճիշտ մեկնաբանելով օրենսդրության այն դրույթները (մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 71-րդ հոդվածը), որոնք վերջիններիս հնարավորություն են տալիս համապատասխան հարցմամբ դիմելու սահմանադրական դատարան, ***իրենց որոշումներով թույլ են տալիս ՀՀ Սահմանադրությամբ նախագծված սահմանների խախտում և անթույլատրելիորեն հայտնվում են սահմանադրական արդարադատության «դաշտում»:***

Դա է վկայում նաև 2012 թ. մարտի 6-ի ՍԴՈ-1010 որոշումը[11], որում սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ ՀՀ վարչական դատարանը տվյալ գործով կայացրած վճռում վերազանցել է իր լիազորությունները. հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջը՝ արձանագրել է, որ համապատասխան դրույթը չի հակասում Սահմա\\նադրությանը: Բացի դրանից, անընդունելի է այն, որ ՀՀ վճռաբեկ դատարանը ևս այդ գործով հետագայում նշել է, որ «կոնկրետ դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգա-մանքը ենթակա է գնահատման դատարանի (գործը քննող դատա-վոր կամ դատավորների կազմի) կողմից»: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը նշել է, որ Օրենքի 71-րդ հոդվածը, մասնավորապես 5-րդ մասը, նախատեսում է, որ դատարանը սահմանադրական դատարան դիմելու համար երկու հիմնավորում պետք է

այն դեպքում, երբ դատարաններն իրենք կարող էին հիմնավոր կասկածի դեպքում կասեցնել կոնկրետ գործով վարույթը և պարզել կիրառման ենթակա նորմի սահմանադրականությունը: Սակայն իրականությունը փաստում է, որ դա տեղի չի ունենում: Մեր առջև ծառացած այս սուր հիմնախնդրի պատճառները կարող են բազմաթիվ և բազմաբնույթ լինել:

[11] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թ. մարտի 6-ի ՍԴՈ-1010 որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետը:

ներկայացնի: Նախ՝ պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ: Երկրորդ՝ հիմնավորի այն հանգամանքը, որ տվյալ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ: Առաջին դեպքում դիրքորոշումը կարող է ձևավորվել նորմի սահմանադրականության վերաբերյալ դատավորի ինքնուրույն ու համարժեք իրավական վերլուծության շնորհիվ: Սակայն դա չի կարող դառնալ դատաքննության առարկա ու դրա ընթացքում՝ «գնահատման» արդյունք և Հայաստանի Հանրապետության անունից ընդունվող դատական ակտով ամրագրվի, որ տվյալ նորմը համապատասխանում է կամ չի հակասում Սահմանադրությանը: Դա պարզապես կհակասի ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջներին և դատական սահմանադրական վերահսկողության նյութական ու դատավարական նորմերի բովանդակությանը: Կիրառվելիք նորմի սահմանադրականության վերաբերյալ հնարավոր մտահոգության առկայության ու սահմանադրական դատարանի միջոցով դրա փարատման հնարավորության հանգամանքը մեկնաբանելով որպես այդ նորմի՝ ***Սահմանադրությանը հակասելու հանգամանքի գնահատման իրավասություն****՝ տեղիք կտրվի ինքնիրավչության՝ անուղղակի ձևով յուրացնելով սահմանադրական արդարադատության գործառույթ ու ստեղծելով նաև հետագա իրավական շփոթ*[12]*:*

Բացի դրանից, ըստ սահմանադրական դատարանի՝ իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս, սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել որպես ***ոչ միայն իրավունք, այլև պարտականություն:*** *Առանց դրա, մի կողմից՝ նորմի սահմանադրականության վերաբերյալ մտահոգությունը չի կարող փարատվել հայեցողական մոտեցմամբ, որովհետև այն պահանջում է «գնահատման» դատավարական համապատասխան ընթացակարգ և դրա իրականացման սահմանադրական լիազորություն, մյուս կողմից՝ մարդկանց իրավունքները պաշտպանելու փոխարեն հնարավոր հակասահմանադրական նորմի կիրառմամբ կխախտվեն այդ իրավունքները: Դատական պրակտիկան նաև ցույց է տալիս, որ դրանց հետագա վերականգնումը դառնում է ավելի դժվար ու հաճախ անհնարին՝ հանգեցնելով արդարադատության նկատմամբ վստահության կորստի: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետով (ըստ որի՝ դատարանները կարող են դիմել սահմանադրական դատարան՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով) ՀՀ դատարաններին վերապահված հնարավորության խելամիտ իրացումը կարող է երաշխավորվել Օրենքի 71-*

---

[12] *Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թ. սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշման 9-րդ կետը:*

րդ հոդվածի (համաձայն որի՝ դատարանները դիմում են սահմանադրական դատարան, եթե գտնում են, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմատիվ բնույթ, դրույթը կամ դրույթները, որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող գործով, հակասում են Սահմանադրությանը) սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում: Վերջինում «գտնում են» արտահայտությունը պետք է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դատավորի իրավական վերլուծության արդյունք: Այնինչ գնահատումը ենթադրում է համապատասխան դատավարական ընթացակարգ ու դրա իրականացման համարժեք լիազորություն:

Ահա թե ինչու է առանձնապես խոստումնալից և արգասաբեր համարվում այն իրավական նորմի գոյությունը, համաձայն որի՝ յուրաքանչյուր դատարան կոնկրետ քաղաքացիական, քրեական կամ այլ գործեր քննելիս իրավունք ունի օրենսդրական ակտի դրույթի (դրույթների) սահմանադրականության կապակցությամբ հարցմամբ դիմելու սահմանադրական դատարանին: Վերոշարադրյալի հիման վրա կարող ենք փաստել, որ դա չի կարող ընկալվել միայն որպես իրավունք. այն հարկ է մեկնաբանել որպես դատարանի լիազորություն (որը ենթադրում է ինչպես իրավունքի, այնպես էլ պարտականության առկայություն): Հետևաբար, անհրաժեշտ է մշտապես գիտակցել, որ ***դատական իշխանության բոլոր կրողներն իրենց իրավասությանը վերաբերող իրավական տարածության մեջ կոչված են գործելու որպես Սահմանադրության պաշտպաններ, օրինականության ու քաղաքացիական համերաշխության պահապաններ:***

Ելնելով վերոգրյալից՝ փաստում ենք, որ առավելագույնս պետք է բացառվեն այդ մարմինների միջև կառուցակարգային ու գործառութային հավանական «բախումները», և մեր պետության օրենսդրությամբ պետք է հստակորեն նախատեսվեն տվյալ մարմինների փոխհարաբերությունների բոլոր ուղղությունները՝ հատկապես նպատակ ունենալով նպաստել մարդու իրավունքների և ազատությունների, ընդորում՝ սահմանադրական արդարադատության իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացմանը:

Իհարկե, միանշանակ է, որ մեր երկրում սույն բնագավառում տիրող իրավիճակն ավելի բարվոք կլիներ այն պարագայում, երբ դատարաններն իրենց այդ իրավունքից օգտվեին առավելագույնս օպտիմալ, իրավական ակտի կամ դրա առանձին դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ որևէ լուրջ կասկածի կամ դատավարության կողմերից մեկի հիմնավորված պնդման հիման վրա համապատասխան խնդրով դիմեին սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմնին: Հարկ ենք համարում ընդհանրացնել և ներկայացնել մեր կատարած որոշ ուսումնասիրությունների արդյունքներ: Այսպես, 2009 թ. ՀՀ սահմանադրական դատարանում նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության

վերաբերյալ քննության ընդունված 20 գործերից միայն 3-ն են եղել դատարանների դիմումների հիման վրա, 2010 թ.՝ քննված 34 գործերից՝ 4-ը, 2011 թ.՝ 26-ից միայն 2-ը, իսկ 2012 թ. ոչ մի դատարան ՀՀ սահմանադրական դատարան դիմում չի ներկայացրել: Նշենք, որ 2013 թ. ՀՀ դատարանները ներկայացրել են 4 դիմում, որոնցից 3-ը, սակայն, վերաբերել են միևնույն խնդրին: Ինչ վերաբերում է կոնկրետ իրավադրույթներ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներին, ապա, օրինակ, 2009 թվականից մինչև 2011 թվականը քննված 30 այդպիսի գործերից միայն 3-ն են քննության ընդունվել դատարանների դիմումների հիման վրա[13]:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, հանգում ենք այն եզրակացության, որ սահմանադրական դատարանի և արդարադատություն իրականացնող մյուս մարմինների գործունեության միջև «անջրպետ» անցկացնելն անընդունելի է, քանզի մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության համակարգը կարող է արդյունավետ գործել միայն այն դեպքում, երբ դատական իշխանության գործառույթ իրականացնող բոլոր մարմիններն աշխատում են փոխհամաձայնեցված, վստահում են միմյանց, խուսափում են ավելորդ և անհիմն «մրցակցության» տարատեսակ դրսևորումներից, հետևում են ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերով նախատեսված պահանջներին, բացառապես նպատակ ունենալով վերացնել թույլ տրված խախտումները, վերականգնել ֆիզիկական և իրավաբանական անձանց ոտնահարված իրավունքները:

---

[13] *ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները տե՛ս http://concourt.am/armenian/decisions/common/index.htm կայքէջում կամ ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների ուսումնասիրման ուղեցույցը (առ 01.04.2013թ.):*

КОНСТИТУЦИОННЫЕ ЗАПРОСЫ СУДОВ В КОНТЕКСТЕ ПРАВА ЧЕЛОВЕКА НА КОНСТИТУЦИОННОЕ ПРАВОСУДИЕ

САРГСЯН А. Г.

Резюме

В настоящее время наиболее дискуссионными вопросами юридической науки и практики являются проблемы, связанные с разграничением полномочий и соотношением конституционного и иных судов, связанные с распределением функций конституционных и общих органов юстиции (“обычных” судов общей юрисдикции и специализированных судов), а также вопросы обращения судов с предварительными конституционными запросами в конституционный суд конкретного государства. Следует подчеркнуть важность вышеназванного полномочия судов именно как средства, содействующего реализации права человека на конституционное правосудие.

CONSTITUTIONAL REQUESTS OF THE COURTS IN THE CONTEXT OF HUMAN RIGHT TO CONSTITUTIONAL JUSTICE

A. SARGSYAN

Abstract

Currently, the most controversial issues of legal science and practice are the problems connected with the demarcation of the authorities and correlation of the constitutional and other courts, related to the distribution of the functions of constitutional and general bodies of justice (“common” courts of general jurisdiction and specialized courts), as well as the issues of the preliminary constitutional requests of the courts to the constitutional court of the particular state. It seems necessary to highlight the importance of the aforementioned powers of the courts just as means of supporting the human right to constitutional justice.